ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Կարգավորման ենթակա ոլորտի կամ խնդրի սահմանումը.

Նախագծով կարգավորման ենթակա ոլորտն առնչվում է Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության բարձրագույն մարմնի՝ Կառավարության անդամների կողմից իրենց լիազորություններն ստանձնելիս տրվող երդման տեքստի բովանդակությանը:

Նախագծով առաջարկվում է փոփոխել «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված երդման տեքստը՝ այն համալրելով լրացուցիչ արժեքային բաղադրիչներով:

2. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը.

Ներկայումս Օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված տեքստը ամբողջապես չի արտացոլում պետության հարատևության, սերունդների առջև պատասխանատվության, պետականության ամրապնդման և զարգացման առանցքային տարրերը, որոնք անհրաժեշտ նախապայմաններ են ժողովրդավարական և իրավական պետության համար:

Առաջարկվող երդման տեքստում օգտագործված հասկացություններն ընտրվել են՝ արտացոլելու համար Հայաստանի Հանրապետության պետականության հիմքերը, ժողովրդավարական կառավարման սկզբունքները և Կառավարության անդամի սահմանադրական առաքելությունը:

«Հանուն Հայաստանի Հանրապետության հարատևության, ինքնիշխանության և զարգացման» ձևակերպումը սահմանում է Կառավարության անդամի գործունեության հիմնական արժեքային և քաղաքական նպատակը: «Հարատևությունը» արտահայտում է Հայաստանի Հանրապետության երկարաժամկետ գոյության, կայունության և շարունակականության գաղափարը: «Ինքնիշխանությունը» բնութագրում է Հայաստանի Հանրապետության անկախությունը՝ իր տարածքում և արտաքին հարաբերություններում ինքնուրույն գործելու կարողությունը և հանդիսանում է պետականության հիմնարար

հատկանիշներից մեկը: «Զարգացումը» ընդգծում է պետության առաջընթացի, մրցունակության, բարեկեցության և ապագային միտված քաղաքականության կարևորությունը:

«Պահպանել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը և օրենքները» դրույթն ընդգծում է սահմանադրական կարգի նկատմամբ հավատարմությունը և իրավական պետության հիմքում ընկած պարտականությունը: Սահմանադրությունը հանդիսանում է պետության հիմնական օրենքը, իսկ օրենքների պահպանումը՝ հանրային իշխանության լեգիտիմ գործունեության նախապայմանը:

«Ծառայել հանրային շահին» ձևակերպումը նպատակ ունի ընդգծելու, որ Կառավարության անդամի գործունեության առաջնային չափանիշը ոչ թե մասնավոր կամ խմբային շահն է, այլ հանրության և պետության ընդհանուր շահը: Հանրային շահի գաղափարը ժողովրդավարական կառավարման առանցքային սկզբունքներից է:

«Նպաստել Հայաստանի Հանրապետության պետականության ամրապնդմանը» դրույթը շեշտադրում է Կառավարության անդամի պատասխանատվությունը պետական ինստիտուտների կայացման, արդյունավետ կառավարման, ազգային անվտանգության և պետական կարողունակության զարգացման գործում: Պետականության ամրապնդումը հանդիսանում է անկախ և ինքնիշխան պետության պահպանման կարևոր պայման:

«Առաջնորդվել իրավունքի գերակայության սկզբունքով» ձևակերպումը հիմնված է ժողովրդավարական իրավական պետության հիմնարար արժեքներից մեկի վրա: Իրավունքի գերակայությունը ենթադրում է, որ պետական իշխանությունը սահմանափակված է իրավունքի պահանջներով, իսկ բոլոր անձինք և պետական մարմինները գործում են օրենքի շրջանակներում:

«Գործել ի շահ ներկա ու ապագա սերունդների» դրույթն արտահայտում է հանրային իշխանության երկարաժամկետ պատասխանատվությունը: Այն ընդգծում է, որ քաղաքական որոշումները պետք է գնահատվեն ոչ միայն կարճաժամկետ ազդեցության, այլև Հայաստանի Հանրապետության հետագա զարգացման, տնտեսական, սոցիալական և ինստիտուցիոնալ ժառանգության պահպանման տեսանկյունից: Այս մոտեցումը միտված է ամրապնդելու միջսերնդային պատասխանատվության սկզբունքը պետական կառավարման մեջ:

3. Կարգավորման նպատակը, ակնկալվող արդյունքները.

Նախագծի կարգավորման նպատակն է կատարելագործել Կառավարության անդամների երդման տեքստի իրավական բովանդակությունը՝ դրանում առավել հստակ արտացոլելով պետականության ամրապնդման, հանրային և պետական շահերի պաշտպանության, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության զարգացմանն ու հարատևությանն ուղղված արժեքները:

Նախագծի ընդունման արդյունքում ակնկալվում է, որ Կառավարության անդամների կողմից տրվող երդումն ավելի ամբողջական կերպով կարտացոլի նրանց կողմից պաշտոնի ստանձնման հետ կապված պատասխանատվության շրջանակը և պետական իշխանության հիմքում ընկած հիմնարար արժեքները:

4. Իրավական ակտի նախագիծը մշակող պատասխանատու մարմինը, ինչպես նաև, անհրաժեշտության դեպքում, նախաձեռնողի, հեղինակների և մշակմանը մասնակցող անձանց մասին տեղեկություններ.

Նախագիծը մշակվել է Արդարադատության նախարարության կողմից:

5. Նախագծի ընդունման կապակցությամբ լրացուցիչ ֆինանսական միջոցների անհրաժեշտության մասին.

Նախագծի ընդունման կապակցությամբ լրացուցիչ ֆինանսական միջոցների անհրաժեշտություն չկա:

6. Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ. Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050, Կառավարության 2021-2026թթ. ծրագիր, ոլորտային և/կամ այլ ռազմավարություններ.

Նախագիծը բխում է Կառավարության 2026 թվականի հունվարի 8-ի «Հայաստանի տնտեսական և ինստիտուցիոնալ վերափոխման դոկտրինը հաստատելու մասին» թիվ 16-Լ որոշմամբ հաստատված Հավելվածի 3-րդ գլխի 66-րդ կետի երկրորդ նախադասությունից, որի համաձայն՝ Կառավարությունը նպատակ ունի արդիականացնելու պետական ինստիտուտները՝ ապահովելով թափանցիկություն, կանխատեսելի իրավական միջավայր և երկարաժամկետ պլանավորման գործիքակազմ: